

« 19 » փետրվար 2025թ.

No 986 - Լ

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ)  
ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉՐՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ 6-ՐԴ ԿԵՏԻ 3-ՐԴ  
ԵՆԹԱԿԵՏԻ «Դ» ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ) ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N 4 հավելվածի 7-րդ և 8-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածով հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի դրույթները.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

**1. Հաստատել՝**

բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրելու ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշման հավելված N 4-ի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված Լիազոր մարմնի ուղեգրման լիազորությունները պատվիրակել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ում սույն ուղեցույցով կազմավորված հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի տնօրեն Արման Հովակիմյանին՝ ուղեգրման գործընթացը կազմակերպելու նպատակով ձևավորել առնվազն 5 անդամից բաղկացած հանձնաժողով՝ ներառելով նաև առողջապահության նախարարության ներկայացուցիչ:

4. Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից  
ձագաժ հարաբերությունների վրա:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ)  
ԽՄՔԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂԵԳՐԵԼՈՒ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն ուղեցույցով կարգավորվում են բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց (այսուհետ՝ Շահառու) պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրման հետ կապված հարաբերությունները:
2. Ուղեգրման ընթացքում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ, սույն հրամանով և այլ իրավական ակտերով:
3. Բժշկական ցուցումների առկայության դեպքում, սույն ուղեցույցին համապատասխան տրամադրվում է ուղեգիր՝ պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով արտահիվանդանոցային հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով:
4. Տրված ուղեգրով բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բոլոր բժշկական կազմակերպություններում:

**II. ՈՒՂԵԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ**

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

5. Ուղեգիր կարող է տրամադրվել Ձև 1-ով Շահառուի կամ Երևանի քաղաքապետի և Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից ներկայացված միջնորդագրերի հիման վրա:

6. Դիմումին կամ գրավոր միջնորդությանը կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

2) տեղեկանք տրամադրված առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպության կողմից կամ բժշկական եզրակացություն՝ տրված հիվանդին բուժող բժշկի կողմից, այդ թվում՝ անհետաձգելի ցուցումներով հիվանդանոց ընդունված դեպքերում, կամ եզրակացություն՝ տրված համապատասխան նեղ մասնագետի կողմից,

3) սույն ենթակետում նշված խմբերից որևէ մեկին պատկանելությունը հավաստող, իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի պատճենը՝ առկայության դեպքում՝ ա. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0.01 միավորից մինչև 28.00 միավորը ներառյալ անապահովության միավոր ունեցող ընտանիքների անդամներ,

բ. 65 և բարձր տարիքի միայնակ կենսաթոշակառուներ,

գ. փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքների անդամներ,

դ. ՀՀ-ում մշտական բնակություն ունեցող ՀՀ քաղաքացիություն չունեցող հղի կանայք՝ միայն ծննդալուծումը,

ե. բազմազավակ (4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ծնողներ,

զ. երեխա խնամող միայնակ անձ,

է. Քառօրյա և 44-օրյա պատերազմի մասնակիցներ, ինչպես նաև զինծառայության ընթացքում վիրավորում ստացած նախկին զինծառայողներ, ովքեր բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամ չեն ճանաչվել (հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում):

ը. որոշակի բնակության վայր չունեցող կամ անօթևան անձիք

7. Դիմումները և գրավոր միջնորդությունները ընդունվում են ինչպես թղթային, այնպես էլ՝ էլեկտրոնային եղանակով (Ձև 1):

8. Դիմումները և գրավոր միջնորդությունները քննարկվում են առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհետաձգելի հիվանդանոցային բուժում

պահանջող դեպքերը քննարկվում են երկու աշխատանքային օրվա ընթացքում կամ արտահերթ:

9. Ներկայացված փաստաթղթերի հիման վրա կայացվում է հետևյալ որոշումներից մեկը (Ձև 3)՝

1) բավարարել դիմումը կամ միջնորդագիրը և տրամադրել ուղեգիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման N 4 հավելվածի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն,

2) մերժել դիմումը կամ միջնորդագիրը և տրամադրել պատասխան:

10. Շահառուի բուժօգնությունը կազմակերպելու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրումը կարող է մերժվել, եթե.

ա. ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն ուղեցույցի 6-րդ կետով սահմանված անհրաժեշտ պայմաններին և պահանջներին,

բ. պացիենտն արդեն իսկ ընդունվել է բժշկական կազմակերպություն, գտնվում է բուժման մեջ կամ դուրս է գրվել, բացառությամբ անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող դեպքերի,

գ. բուժման վճարովի եղանակը ընտրելուց և վճարովի ծառայությունների պայմանագիրը կնքելուց կամ համապատասխան վճարումները կատարելուց հետո,

դ. բացակայում են կամ պատշաճ ներկայացված չեն բժշկական ցուցումները,

ե. տվյալ տարվա ընթացքում շահառուին արդեն տրամադրվել է 1 արտահիվանդանոցային հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտության և 1 հիվանդանոցային բուժօգնության ուղեգրեր:

11. Հանձնաժողովի կողմից վարվում է Ձև 2-ով սահմանված «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով դիմումների կամ միջնորդությունների գրանցման և պատասխանների տրամադրման» գրանցամատյան:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂԵԳՐՄԱՆ ԻՑ

ՀԱՍՑԵ-----  
ՀԵՌԱԽՈՍ-----

ԴԻՄՈՒՄ

-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----  
-----

- Հայտնում եմ, որ ես (պացիենտը) չեմ (չի) գտնվում բուժման մեջ բժշկական կազմակերպությունում կամ դուրս չեմ (չի) գրվել
- Հայտնում եմ, որ կապված անհետաձգելի հիվանդանոցային բուժման հետ՝ ես (պացիենտը) գտնվում եմ (է) բուժման մեջ բժշկական կազմակերպությունում կամ դուրս եմ (է) գրվել

Կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- պացիենտի անձը հաստատող փաստաթուղթ
- բժշկական փաստաթուղթ, անհետաձգելի դեպքերում՝ տեղեկանք տրված տվյալ բժշկական կազմակերպության կողմից
- ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0.01 միավորից մինչև 28.00 միավորը ներառյալ անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ
- 65 և բարձր տարիքի միայնակ կենսաթոշակառու
- փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքի անդամ
- ՀՀ-ում մշտական բնակություն ունեցող ՀՀ քաղաքացիություն չունեցող հղի կանայք՝ միայն ծննդալուծումը,
- բազմազավակ (4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ծնող
- երեխա խնամող միայնակ անձ
- Քառօրյա և 44-օրյա պատերազմի մասնակիցներ, ինչպես նաև զինծառայության ընթացքում վիրավորում ստացած նախկին զինծառայողներ, ուլքեր

բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամ չեն ճանաչվել  
(հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում):

- որոշակի բնակության վայր չունեցող կամ անօթևան անձիք
- այլ փաստաթղթեր՝ ըստ շահառուի հայեցողության

---

ԴԻՄՈՂ՝ \_\_\_\_\_

(անուն, ազգանուն, ստորագրություն)

---

(օր, ամիս, տարեթիվ)

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԳՐԱՎՈՐ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՈՒՂԵԳՐԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

N	Պացիենտի անուն, ազգանուն	Միջնորդություն	Հասցե	Ախտորոշում	Որոշում	Որոշման կայացման ամսաթիվ

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ)**  
**ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**  
**ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ**  
**ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ՈՒՂԵԳՐՄԱՆ**

պարոն (տիկին) \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_

Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնությունը և սպասարկումը ստանալու Ձեր դիմումը (.....գրավոր միջնորդությունը) (ընդգծել) մերժվել է բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի \_\_\_\_\_-ի N \_\_\_\_\_ հրամանով հաստատված հավելվածի -րդ կետի \_\_\_\_\_ ենթակետը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**անուն, ազգանուն, ստորագրություն**